

Հաստատված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի Գիտական խորհրդի «06» վարդի 2024թ. նիստում

Գիտական խորհրդի նախագահ՝

Ե. Սերոբյան



Հիմք՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»  
հիմնադրամի Գիտական խորհրդի «06» վարդի 2024թ. -ի նիստում  
հաստատված ՇՊՀ-ում հարցումների անցկացման և  
արդյունքների ամփոփման ընթացակարգ:

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Հիմնադրամ) հարցումների անցկացման և արդյունքների ամփոփման սույն ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) սահմանում է հարցումների՝ որպես կրթության որակի ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպման և արդյունքների ամփոփման գործընթացները:
- 1.2. Սույն Ընթացակարգի իրավական հիմք են հանդիսանում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը, «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում իրականացվող ուսումնական գործընթացում դասավանդման որակի և արդյունավետության գնահատման կազմակերպման կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

1.3. Հարցումների հիմնական նպատակն է բացահայտել հիմնադրամի շահառուների և/կամ շահակիցների վերաբերմունքն ու բավարարվածությունը (նաև կարիքները)՝ նրանց մատուցվող ծառայություններից և, ըստ այդմ, կատարել լավարկումներ այդ նույն շահառուներին և/կամ շահակիցներին մատուցվող ծառայություններում՝ միտված վերջիններիս որակի շարունակական բարելավմանը:

## **2. ՀԱՐՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

2.1 Հիմնադրամի շահառուների և/կամ շահակիցների շրջանում հարցումներ կարող են իրականացնել Որակի ապահովման բաժինը, Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման, Գիտական քաղաքականության և նորարարության, Արտաքին համագործակցության կենտրոնները, Մինչբուհական կրթության կազմակերպման և Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժինները:

2.2 Յուրաքանչյուր հարցում կազմակերպվում է ռեկտորի հրամանով հաստատված գրաֆիկով, որում պարտադիր նշվում են հարցումն իրականացնող պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումը, հարցման նպատակը, թիրախը, անցկացման ձևը, ժամանակահատվածը, հարցաթերթիկը, հարցման արդյունքների ամփոփման և վերլուծության ժամանակահատվածը և այլն:

2.3 Հարցման գործընթացում պարտադիր է պահպանել շահառուների և/կամ շահակիցների կողմից անանուն հարցաթերթիկների և/կամ էլեկտրոնային էջերի լրացման կամավորության սկզբունքը, ինչի պատասխանատվությունը կրում է հարցումն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը:

## **3. ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ**

3.1 Հարցումների արդյունքները պահպանվում են հարցումն իրականացնող ստորաբաժանումում:

3.2 Հարցումների արդյունքների ամփոփումն ու վերլուծությունը կատարում է հարցումն իրականացնող ստորաբաժանումը: Ռեկտորի հանձնարարականի հիման վրա, ըստ վերաբերելիության, հարցման արդյունքները կարող են տրամադրվել նաև համապատասխան ստորաբաժանումներին:

3.3 Ռեկտորի հանձնարարականի հիման վրա հարցումներ անցկացնող ստորաբաժանումը ՈԱ բաժնի համակարգմամբ հարցումների արդյունքների որակական և քանակական վերլուծությունների հիման վրա ներկայացնում է առաջարկություններ ոլորտի լավարկման համար, ինչին հետևում են ռեկտորի համապատասխան հանձնարարականները: Վերջիններիս կատարման ավարտին արձանագրված արդյունքների մասով ՈԱ բաժնի կողմից կազմվում է հարակից ամփոփիչ զեկույց:

#### **4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

4.1 Սույն Ընթացակարգը հաստատում, նրանում փոփոխություններ և լրացումներ կատարում է Հիմնադրամի Գիտական խորհուրդը: